ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1>>

ք. Երևան 17 հունիսի 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ԷԼ-ՍԹՐՈՅ ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Գալոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհապույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված

թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **10 095 000 (Տաս միլիոն իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **3 (երեք) տոկոսի** չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի **0.19 (զրո ամբողջ տասնինը տասնորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«ԷԼ-ՍԹՐՈՅ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	Հասցե՝ *ք. Երևան, Դրոյի 44*
	Բանկ՝ *ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ Բանկ թիվ 2 մ/ճ*
ՀՎՀՀ 02593108	Հ/Հ *16063022273700*
	ՀՎՀՀ ՀՎՀՀ՝ *00911617*
Է. Կիրակոսյան ..... (ստորագրություն)	Հ. Գալոյան ..... (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
17 հունիսի 2020թ. կնքված N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
		Ծառայության մատուցման ընդհանուր պահանջների 1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: 2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝ • շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը, • ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կապալի պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին, • Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, • ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից, • ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,				Լենինգրադյան 48/3 շ.-2 մ Լենինգրադյան 48/5 շ.-4 մ Լենինգրադյան 50/1 շ.-1, 2, 3 մ Լենինգրադյան 38 շ.-5 մ Շինարարների 7 շ.-6 մ Սիսակյան 10 շ.-4 մ Լուկաշին 2 շ.-3 մ Լուկաշին 3 շ.-2 մ Էստոնական 9 շ.-2 մ Էստոնական 7 շ.5 մ Շինարարների 10շ.-1,2 մ Շինարարների 6 շ.-3 մ Մարգարյան 1 նրբ. 6շ.-1,2,3,4.մ Մարգարյան 1 նրբ. 1շ.-1,2,3,4.մ Գ-3 թաղ. 1բ. շ.-1,2 մ Գ-3 թաղ. 19 շ.-1,2 մ Գ-3 թաղ. 17 շ.-1,2,3 մ Գ-3 թաղ. 16. շ. 1,2,3 մ, Գ-3 թաղ. 7շ. 1, 2մ., Գ-3 թաղ. 8շ. 1, 2, 3մ., Գ-3 թաղ.	
1	71351540/62		դրամ	980000	1		Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

		• վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, • ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար, • կատարել որակի և քանակի ամենօրյա հսկումը (համապատասխան նշում կատարելով մատյանում), այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում, • շինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, • հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար, • կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր), • կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,				9շ. 1, 2մ., Գ-3 թաղ. 11շ. 1, 2մ., Գ-3 թաղ. 12շ. 1, 2, 3մ., Գ-3 թաղ. 13շ. 1, 2մ., Գ-3 թաղ. 2շ. 1, 2մ., Գ-3 թաղ. 26շ. 1, 2, 3մ., Գ-3 թաղ. 4շ. 1, 2մ., Գ-3 թաղ. 5շ. 1, 2, 3 մ., Լենինգրադյան փող. 12շ. 1մ, Մազմանյան 6 շ.-2,4,5,մ Մազմանյան 22 շ.-1,2,3,4,5 մ Առաքելյան 66 շ.-1 մ Առաքելյան 68 շ.-1 մ Առաքելյան 70 շ.-1 մ Հալաբյան 25 շ.- 1 մ Շինարարների 25 շ.- 1 մ Շինարարների 28 շ. -2 մ
		• շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները, • Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները: • պարտադիր ներկա լինել քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ հրամանի հավելված 1-ով նախատեսված ծածկման շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում: ***Հաշվետվության ներկայացման պահանջներ*** Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին ծառայությունների վերաբերյալ ***<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>***, որոնք հանդիսանում են ծառայությունների				Բաշինջաղյան 1 նրբ. 12 շ.-4 մ Ֆուչիկի 1 նրբ. 6 շ.-1,2,3. մ Մարգարյան նրբ. 12-1,2,3, մ Մարգարյան նրբ. 3 շ.1,2,3 մ Մարգարյան 41 շ.-6 մ Մարգարյան 33 շ.-1,2,3 մ Հալաբյան 63 շ.-2 մ Հալաբյան 45 շ.-3 մ Ֆուչիկի 2 շ.-1 մ Ֆուչիկի 6 շ.-3 մ Ֆուչիկի 14 շ.-1 մ Շիրազի 48 շ.- 1,2,3 մ	

		հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող				Շիրազի 14 շ.-2,	
		փաստաթղթեր: ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են պարբերաբար, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ: ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական փաստաթղթեր, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ: ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** նաև ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** ներկայացվում է շինարարական				3 մ Շիրազի 22 շ. -1,2,3 մ Շիրազի 26 շ.-1,2,3 մ Շիրազի 30 շ.-1,2,3 մ Շիրազի 32 շ.-1,2,3 մ Արզումանյան 16/3 շ.-1 մ	
						Արաբկիր վարչական շրջան, Համբարձումյան 8 (1-ին, 2-րդ մուտքեր-միայն պատուհաններ), Կասյան 2 (1-ին, 2-րդ, 3-րդ մուտքեր), Սունդուկյան 15/2 (1 մուտք), Սունդուկյան 15ա (1 մուտք), Մամիկոնյանց 6/1 (1 մուտք), Մամիկոնյանց 15 (1 մուտք),	
3	71351540/46	աշխատանքների ավարտական կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:	դրամ	740000	1	Մամիկոնյանց 35 (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մուտքեր-միայն պատուհաններ), Տիգրանյան 19(1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մուտքեր), Կոմիտաս 34 (1 մուտք), Կոմիտաս 54 (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ մուտքեր), Կինյան 2 (1-ին, 5-րդ մուտքեր), Կոմիտաս 23 (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

						մուտքեր), Մամիկոնյանց 37 (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մուտքեր-միայն պատուհաններ), Կիևյան 8 (2-րդ, 5-րդ, 6-րդ մուտքեր), Կասյան 6 (1-ին, 2-րդ, 3-րդ մուտքեր), Դումա՝ն 51 (1 մուտք), Սունդուկյան 23 (1-ին, 2-րդ մուտքեր), Մամիկոնյանց 23/1 (1 մուտք-միայն դռներ), Կոմիտաս 46 (4-րդ մուտք), Կիևյան 3 (4-րդ, մուտք), Հակոբյան 1 (1 մուտք), Վրացական 15 (3-րդ մուտք)	
						հասցեներում /ընդամենը 22 շենք, 51 մուտք/	
4	71351540/58		դրամ	1095000	1	Դավթաշեն վ/շ. Դավթ. 1-ին թաղ. – 33շ. /3 և 4մ/, 32 շ. /4մ/, 15շ. /1 և 2մ/, 14շ /2մ բազալտ. բազրիք/, 40շ., 10Աշ. /1 և 2մ/, 35շ /մետ.դուռ/, 28շ. /մետ. դուռ/ Դավթ. 2-րդ թաղ.- 39շ. /1 և 2 մ/, 6շ., 13շ. Դավթ. 3-րդ թաղ.- 24շ, 1շ., 13շ. /3 և 4մ/, 8շ.	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

						/3մ/ /բազալտ, մետ.դուռ, բազրիք/ Դավթ. 4-րդ թաղ. -46/10 /1և 2մ/, 51շ., 1Աշ /1 և 2մ/, 11շ /3 և 4մ/, 15շ., 26շ.,	
						Էրեբունի վարչական շրջան, Գլինկայի փող. հ.6 շենքի 1,2,3 մուտքերի, Սասունցի Դավիթ փող. հ. 13 շենքի 1,2,3 մուտքերի, Խաղաղ Դոնի փող. հ. 31 շենքի 1,2,3,4,5,6,7,8,9,10, 11,12,13 մուտքերի, Նոր Արեշ 15-րդ փող. հ.1 շենքի 1,2 մուտքերի, Ազատամարտի կների փող հ.78/1 և Աթոյան անցուղի հ.11 շենքերի մուտքերի, Աթոյան անցուղի հ. 20 շենքի 1,2 մուտքերի, Ազատամարտի կների փող հ.76, Արցախի պող. հ. 10բ շենքերի մուտքերի, Արցախի պող. հ. 22/1 շենքի 1,2 մուտքերի, Արցախի պող հ.24/1 շենքի մուտքի, Նոր Արեշ 12-րդ փող.	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
5	71351540/59		դրամ	2050000	1		

						հ. 99/1 շենքի	
						1,2,3,4 մուտքերի, Նոր Արեշ 14-րդ փող. հ. 38ա շենքի 1,2 մուտքերի, Արցախի պող. հ. 8բ շենքի /1,3/ մուտքերի, Տիգրան Մեծի պող. հ.71 շենքի /1,2,3,4,5,6,7/ մուտքերի, Էրեբունի փող հ.30 շենքի /1,2,3,4,5/	
						Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության 62 (1 - 14), Խորենացի 72 (1,2,3), Նալբանդյան 25/14 (6,7), Տ.Մեծ 6 (3), Տ.Մեծ 20 (1,2), Տ.Մեծ 27 (1,2,3,4,5), Տ.Մեծ 27ա (1), Տ.Մեծ 31 (1,2,3,4), Պուշկին 43 (1,2,3), Պուշկինի 60 (1,2,3,4), Պարոնյան 28 (1,2,3,4), Պարոնյան 28ա (1,2,3), Սարյան 20 (1,2,3,4), Չարենցի 4 (2,4,7,8), Եր. Քոչար 5 (1,2), Քաջազնունու 3 (1,2), Խորենացի 25 (1,2,3), Խորենացի 25ա (1), Խորենացի 27 (1,2,3), Խորենացի 29 (1,2,3),	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
6	71351540/97		դրամ	2350000	1		

						Խորենացի 29ա	
						(1), Խորենացի 47 (1 -8), Վարդանանց 5ա (1,2,3,4), Վարդանանց 20 (1,2), Զավարյան 1 (1,2,3), Զավարյան 1ա (1,2,3), Զավարյան 2 (1,2,3), Նար-Դոս 1 (1,2,3), Դեմիրճյան17ա (1), Դեմիրճյան 31 (1,2)	
						Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Կուրղինյան փող. 21/1, Կուրղինյան փող. 21/2, Արարատյան 1-ին զանգ. 8-րդ շենքի 5-րդ,	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
7	71351540/144		դրամ	1140000	1	Արարատյան 1-ին զանգ. 10-րդ շենքի 5-րդ, Արարատյան 1-ին զանգ. Սեբաստիա 24/1 2-րդ, Արարատյան զանգ. 8/1 շենքի 1-ին, Արարատյան 1-ին զանգ. 4 շենքի 1-ին, Բաբաջանյան փող. 20 շենք, Ռաֆֆու փող. 37 շենք, Ռաֆֆու փող. 39 շենքի /1-3/, Շերամի	

						փող. 105 շենքի /1-4/, Անդրանիկի 71 շենքի 2-րդ, Շերամի փող. 53 շենքի /1-4/, Շերամի 55 շենքի /1-3/, Բաբաջանյան փող. 63 շենք/1-2/, Անդրանիկի փող. 158 շենքի /1-2/, Իսակովի պող. 44/4 շենքի /1-2/, Իսակովի պող. 44/2 շենքի /1-2/, Իսակովի 46, Բաբաջանյան 117շենքի /1-2/, Բաբաջանյան փող. 139 շենքի /1-2/,Բաբաջանյան 141, Անդրանիկի փող. 92 շենքի /1-5/,Անդրանիկի 11 շենքի /1-2/,	
						Անդրանիկի փող. 24շենք, Անդրանիկի փող. 15 շենքի /1-2/, Օհանովի փող. 36 շենքի /1-3/, Օհանովի փող. 32 շենք, Իսակովի պող. 52/1 շենքի 1-ին, Բաբաջանյան փող. 97 շենքի /1-3/, Բաբաջանյան փող. 103 շենք, Անդրանիկի փող. 141 շենքի 1-ին, Բաբաջանյան	

						փող. 15 շենքի /1-3/, Ռաֆֆու	
						փող. 77 շենքի /1-ին/, Սեբաստիա փող. 141 շենքի, Սվաճյան փող. 48 շենք, Ռաֆֆու փող. 33 շենքի /1-2/, Անդրանիկի փող. 103 շենքի 1-ին, Անդրանիկի փող. 81 շենքի 1-ին, Մանուկյան փող. 2, Անդրանիկի փող. 22 շենք	
						Նոր Նորք վարչական շրջան, Նանսենի 1-ին նրբ. 6շ., 2-րդ մուտք, Նանսենի 12շ., 1-ին մուտք, Սաֆարյան 16շ., 2-րդ մուտք, Թոթովենցի 14շ., 5-րդ մուտք, Թոթովենցի 6շ.,4-րդ մուտք, Թոթովենցի 1/1շ., 2-րդ մուտք, Թոթովենցի 11/1շ., 3-րդ մուտք, Թոթովենցի 10շ., 4-րդ մուտք, Մոլդովական 26/2շ., 4-րդ մուտք, Մոլդովական 50/4շ., 2-րդ մուտք, Ն. Ստեփանյան	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
8	71351540/41		դրամ	1100000	1		

						7շ., 4-րդ մուտք, Ն. Ստեփանյան 11շ., 2-րդ մ ուտք, Գայի 23շ., 2-րդ մուտք, Քոչարյան 4շ., 4-րդ մուտք, Հովհաննիսյան 10շ., 2-րդ մուտք, Գյուլիքևխյան 31շ., 1 մուտք, Գյուլիքևխյան նրբ. 11շ., 3-րդ մուտք, Գյուլիքևխյան 7շ., 3-րդ մուտք, Բակունցի 2-րդ նրբ. 2շ., 1-ին մուտք, Բ. Մուրադյան 3շ., 1-ին մուտք, Գալշոյան 4շ., 2-րդ մուտք, Լյուքսեմբուրգի 11շ. 3-րդ մուտք, 7րդ զանգ., 37շ., 1-ին մուտք, 7	
						Ավետիսյան 50շ., 1-ին մուտք, 8-րդ զանգ., 33շ., 1-ին մուտք, Մայակ 2շ., 2-րդ մուտք, Մայակ 9 շ., 3-րդ մուտք, Քոչարյան 12շ., 5-րդմուտք, Ջուղայի 4/1շ., 2-րդ մուտք, 7րդ զանգ., 2շ., 2-րդ մուտք, Բ. Մուրադյան 3շ., 3-րդ մուտք, Բակունցի 1-ին նրբ. 3շ., 3-րդ մուտք, Բակունցի 1շ., 4-	

						դրդ մուտք, Նաեսեեի 2շ.1-ին մուտք, Քոչարյան 4շ., 5-դրդ մուտք	
9	71351540/74		դրամ	640000	1	Շենգավիթ վ/շ Մայիսի 9-ի փողոց հ. 3 շենք /1 հատ/; Մայիսի 9-ի փողոց հ. 5 շենք /1 հատ/; Մայիսի 9-ի փողոց հ. 8 շենք /1 հատ/; Մայիսի 9-ի փողոց հ. 13 շենք /1 հատ/; Մայիսի 9-ի փողոց հ. 12 շենք /2 հատ/; Գ. Նժդեհի փողոց 15 շենք /1 հատ/; Գ. Նժդեհի փողոց 21 շենք /1 հատ/; Արշակունյաց պողոտա հ. 42 շենք /1 հատ/; Արշակունյաց պողոտա հ. 48/3 շենք /2 հատ/; Արշակունյաց պողոտա հ. 50 շենք /1 հատ/; Արշակունյաց պողոտա հ. 52 շենք /1 հատ/; Արշակունյաց պողոտա հ. 54/3 շենք /1 հատ/; Արտաշիսյան փողոց հ. 44/4 շենք /1 հատ/; Բագրատունյաց փողոց 1-ին	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

						նրբանցք 15 շենք /1 հատ/; Արտաշիսյան փողոց հ. 45/20 շենք /1 հատ/; Արտաշիսյան փողոց հ. 45/21 շենք /1 հատ/; Բագրատունյաց փողոց հ. 7 շենք /2 հատ/; Բագրատունյաց փողոց հ. 11 շենք /1 հատ/; Բագրատունյաց փողոց հ. 13 շենք /2 հատ/; Բագրատունյաց փողոց հ. 15 շենքի /1 հատ/; Եղբայրության փողոց հ. 8 շենք /2 հատ/; Եղբայրության փողոց հ. 12 շենք /1 հատ/; Եղբայրության փողոց հ. 14 շենք	
						/2 հատ/; Գ. Նժդեհի փողոց հ.9 շենք /1 հատ/; Գ. Նժդեհի փողոց 9ա շենք /1 հատ/; Չեխովի փողոց հ. 15 շենքի /2 հատ/ ; Մանանդյան փողոց հ. 1 շենք /1 հատ/; Մանանդյան փողոց հ. 14 շենք /1 հատ/; Շիրակի փողոց հ. 66 շենք /1 հատ/; Շիրակի 4-ին նրբ . 7ա	

						շենք /1 հատ/;	
						Շիրակի 4-ին նրբ. 8ա շենք /1 հատ/; Եղ. Թաղևոսյան փողոց հ. 22 շենք /1 հատ/; Ս. Տարոնցու նրբանցք հ. 14 շենք /2 հատ/; Աէրացիա թաղամաս 3 շենք /1 հատ/; Աէրացիա թաղամաս հ. 5 շենք /1 հատ/; Աէրացիա թաղամաս հ. 3/1 շենք /1 հատ/; Արշակունյաց պողոտա հ. 135ե շենք /2 հատ/; Շարուրի փողոց 12 շենք /2 հատ/; Շարուրի փողոց 14 շենք /3 հատ/; Շարուրի փողոց	
						23 շենք /1 հատ/; Բագրատունյաց փողոց հ. 16 շենք /1 հատ/; Բագրատունյաց փողոց հ. 20 շենք /1 հատ/; Բագրատունյաց փողոց հ. 24 շենք /1 հատ/; Արտաշիսյան փողոց հ. 54 շենք /1 հատ/; Արտաշիսյան փողոց հ. 56 շենք /1 հատ/; Արտաշիսյան փողոց հ. 58 շենք	

						/1 հատ/; Մանեղյան փողոց հ. 23ա շենք /3 հատ/; Եղբայրության փողոց հ. 5 շենք /1 հատ/; Եղբայրության փողոց հ. 9 շենք /1 հատ/; Շիրակի 1-ին նրբ. 3 շենք /1 հատ/; Շիրակի 1-ին նրբ. 5 շենք /1 հատ/; Շիրակի 1-ին նրբ. 9 շենք /1 հատ/; Շիրակի 4-ին նրբ. 3 շենք /1 հատ/; Շիրակի 4-ին նրբ. 9 շենք /2 հատ/:	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան

ք. Երևան, Արգիշտի փող. 1

ՀՎՀՀ 25013100

Է. Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԼ-ՍԹՐՈՅ» ՍՊԸ

Հասցե՝ *ք. Երևան, Դրոյի 44*

Բանկ՝ *ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ Բանկ թիվ 2 մ/ճ*

Հ/Հ *16063022273700*

ՀՎՀՀ *ՀՎՀՀ՝ 00911617*

Հ. Գալոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
17 հունիսի 2020թ.-ի կնքված N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
				դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Բանկը և հաշվեհամարը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/62	Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052473627						500000	900000	900000	900000	980000	980000	980000	**980000**
3	71351540/46	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032313190						400000	740000	740000	740000	740000	740000	740000	**740000**
4	71351540/58	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052476505						571896	857842	857842	857842	1095000	1095000	1095000	**1095000**
5	71351540/59	Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900022600598						969300	1830900	1830900	1830900	2050000	2050000	2050000	**2050000**
6	71351540/97	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900012213717						1205904	2050038	2050038	2050038	2350000	2350000	2350000	**2350000**

7	71351540/144	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052470714						591118	886667	886667	886667	1140000	1140000	1140000	1140000
8	71351540/41	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032098536						521300	926700	926700	926700	1100000	1100000	1100000	1100000
9	71351540/74	Երևան քաղաքի Շենգավիթի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900022750724						333900	600600	600600	600600	640000	640000	640000	640000
Ընդամենը																10 095 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Կարգիչների փող. 1
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԷԼ-ՍԹՐՈՅ» ՍՊԸ
Հասցե՝ *ք. Երևան, Դրոյի 44*
Բանկ՝ *ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ Բանկ Թիվ 2 մ/ճ*
Հ/Հ *16063022273700*
ՀՎՀՀ *ՀՎՀՀ՝ 00911617*

Հ. Գալոյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՅՈՒՆԻԲԱՆԿ

0025 ՀՀ, Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
Հեռ. (374 10) 59 55 55
Ֆաքս. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Տելեքս. 243313 UNIJAM

1-5, 53, 12 Charents str., Yerevan, Armenia 0025
Tel. (374 10)59 55 55
Fax. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Telex. 243313 UNIJAM

«15» 06 2020 թ.

N 981

Հավելված 5
«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56»* ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N _____
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է *Երևանի քաղաքապետարանի*
պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ բենեֆիցիար) և *« ԷԼ-ՍԹՐՈՅ» ՍՊԸ*
միջև ընտրված մասնակցի անվանումը

կնքվելիք N **«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1»** պայմանագրից բխող պրինցիպալի
կնքվելիք պայմանագրի համարը

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2. Երաշխիքով ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող
երաշխիքը տվող բանկի անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,009,500 /Մեկ միլիոն ինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
գումարը թվերով և տառերով

(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
հաշվեհամարը

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է: Երաշխավորի պատասխանատվությունը Բենեֆիցիարի առջև սահմանափակվում է այն գումարով, որով տրված է սույն բանկային երաշխիքը:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N **«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1»** կնքվելիք պայմանագրի համարը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1»** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված
կնքվելիք պայմանագրի համարը

կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահի
առաջին տեղակալ՝ Արարատ Ղուկասյան

Ֆինանսական տնօրեն-
Գլխավոր հաշվեպահ՝ Գոհար Գրիգորյան

ՅՈՒՆԻԲԱՆԿ

0025 ՀՀ, Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
Հեռ. (374 10) 59 55 55
Ֆաքս. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Տելեքս. 243313 UNIJAM

1-5, 53, 12 Charents str., Yerevan, Armenia 0025
Tel. (374 10)59 55 55
Fax. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Telex. 243313 UNIJAM

«15» 06 2020 թ.

N 982

Հավելված 4
«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1»* ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N _____
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է *Երևանի քաղաքապետարանի*
պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1»** ծածկագրով կազմակերպված
ընթացակարգի ծածկագիրը

գնման ընթացակարգի արդյունքում *« ԷԼ-ՍԹՐՈՅ » ՍՊԸ -ի*
ընտրված մասնակցի անվանումը

(այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N **«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1»**
կնքվելիք պայմանագրի համարը

պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ԲԲԸ** (այսուհետ՝ երաշխիք տվող
երաշխիքը տվող բանկի անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 10,598,647 /տաս միլիոն հինգ հարյուր իննսունութ հազար վեց հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ, (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015211429** հաշվեհամարին փոխանցման միջոցով:
հաշվեհամարը

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է: Երաշխավորի պատասխանատվությունը Բենեֆիցիարի առջև սահմանափակվում է այն գումարով, որով տրված է սույն բանկային երաշխիքը:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N **«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1»**
կնքվելիք պայմանագրի համարը

ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով պրինցիպալի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարմանը հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/56-1»** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում
կնքվելիք պայմանագրի համարը

կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահի
առաջին տեղակալ՝ Արարատ Ղուկասյան

Ֆինանսական տնօրեն-
Գլխավոր հաշվապահ՝ Գոհար Գրիգորյան